# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ար.մեդտեխնիկա ՍՊԸ-ն ԷԱՃԱՊՁԲ-2026/16-11-ԵՊԲՀ ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | |
|---|---|---|---|
| | ապրանքային նշանը | մակնիշը | տեխնիկական բնութագիրը |
| 14 | Tellyes | TYE9021 | Բազմաֆունկցիոնալ մանկական խնամքի սիմուլյատոր Պետք է մոդելավորի 5 տարեկան երեխայի՝ տարբեր գործառույթներով և գործողություններով: Առնվազն հետևյալ հմտությունների ուսուցում ՝ · IV պունկցիայի պրակտիկա՝ իրատեսական «անցումով» և արյան հետհոսքով · Կաթետերիզացում · Էնեմա (enema) կատարում · Մարմնի բարուրման, լոգանքի և հագուստի փոխման պրակտիկա · Աչքի շրջանի խնամք և դեղորայքային բուժում · Բերանի խոռոչի հիգիենա, լսողական խոռոչի մաքրում · Տրախեոտոմիայի խնամք, մատից նմուշառում · Ներմկանային ներարկում · Քթային և բերանային գաստրիկ խողովակների տեղադրում · Կոլոստոմիայի և իլեոտոմիայի խնամք · Վենիպունկցիայի ուսուցում, ներոսկրային ներարկում Հատկանիշներ՝ · Անատոմիա՝ մանեկենը պետք է ունենա թարթող աչքեր, ատամներ, լեզու, լսողական ուղիները, տրախեոտոմիայի վերք, բազկի երակ և նախաբազկի երակ, որովայնի պատ, իլեոստոմա, ազդրի արտաքին լայն մկան(vastus lateralis), արական/իգական օրգաններ, հետանցք, ստամոքս, թոքեր, միզապարկ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Մանեկենը պետք է լինի իրատեսական՝ 1) Ակտիվ հոդերը հորիզոնական տարբեր դիրքերում ներառում են ՝ պարանոցային ողերը(cervical vertebra), ուսային հոդը, արմունկային հոդը, դաստակային հոդը, կոնքազդրային հոդը և ծնկան հոդը: 2) Ներքին օրգանները պետք է ներառեն ստամոքս, թոքեր, միզապարկ և աղիներ 3) Փոխարինելի տղայի և աղջկա սեռական օրգաններ Հիմնական առանձնահատկություններ՝ 1) IV ուսուցման համար ձեռք՝ իրատեսական անցումով և արյան հետհոսքով 2) Արյան ճնշման սիմուլյացիոն մոդուլի առկայություն հետևյալ գործառույթներով՝ Ոչ ինվազիվ արյան ճնշումը կարող է չափվել իրական արյան ճնշման մոնիտորի միջոցով, ստեթոսկոպի առկայություն՝ ներառյալ Կորոտկովի ձայն Ճնշման արժեքը ցուցադրվում է դինամիկ ձևաչափով՝ մմ ս.ս.-ով և արժեքը հնարավոր է ճշգրիտ կարգավորել՝ 1 մմ ս.ս. ճշգրտությամբ: Հնարավոր է կարգավորվել սիստոլիկ և դիաստոլիկ արյան ճնշումը, ծավալը և զարկերի հաճախականությունը: Կարգավորման միջակայք ոչ պակաս, քան՝ 0–300 մմ ս.ս.: Սիստոլիկ և դիաստոլիկ ճնշումը, ծավալը և սրտի հաճախականությունը կարող են միաժամանակ ցուցադրվել LED էկրանին Ավտոմատ կարգաբերում, ցածր էներգիայի սպառում: Համակարգը պետք է անջատվի 10 րոպե չաշխատելու պարագայում: Մարտկոցը կարող է օգտագործվել առնվազն 1 կիսամյակ: 3) Ձայնային մոդուլի առկայություն ՝ Սրտի նորմալ և անոմալ ձայներ (ոչ պակաս, քան՝ 14), շնչառական ձայներ (ոչ պակաս, քան՝ 13) և աղիների ձայներ (ոչ պակաս, քան՝ 6), ինչպես նաև հիվանդի ձայնը (ոչ պակաս, քան՝ 21) ըստ ընտրության: Միաժամանակ և ցանկացած համադրությամբ կարող են նվագարկվել 5 տարբեր տեսակի ձայներ՝ էկրանին համապատասխան կարգավիճակը ցուցադրելով: Ականջակալները կարող են օգտագործվել ինքնուրույն ուսուցման համար: Ուսուցիչը կարող է օգտագործել ձայնային տուփը (sound box)՝ ցուցադրական նպատակներով ձայներ հեռարձակելու համար: Սիմուլյատորի ներսում պետք է լինի նաև բարձրախոս: Առնվազն 5V DC սնուցման աղբյուրի առկայություն Քաշը ոչ ավել, քան 16 կգ Բաղադրիչներ՝ |

| | | | |
|---|---|---|---|
| | | | Բազմաֆունկցիոնալ մանկական խնամքի սիմուլյատորոր – 1 հատ Կաթետեր – 1 հատ Անուսային խողովակ (anal canal)– 1 հատ Հագուստ – 1 հատ Հեղուկի ռեզերվուար – 1 հատ 2 մլ ներարկիչ – 1 հատ Ձայնային մոդուլ – 1 հատ Մալուխ – 1 հատ Ադապտատոր – 1 հատ Արյան ճնշման չափման համար ձեռք – 1 հատ Արյան ճնշման կառավարման բլոկ– 1 հատ Ստետոսկոպ – 1 հատ Սֆիգմոմանոմետր – 1 հատ Տղամարդու սեռական օրգան – 1 հատ Իգական սեռական օրգան – 1 հատ IV ձեռք/բազուկ/ – 1 հատ IO ոտք – 1 հատ Ոտքի մաշկ – 1 հատ Ոսկրածուծի պունկցիայի բլոկ - 5 հատ 50 մլ ներարկիչ – 1 հատ Մատից արյուն վերցնելու մոդուլ – 1 հատ Երաշխիքային ժամկետը՝ մատակարարման պահից սկսած առնվազն 12 ամիս: Ապրանքը նոր է և չօգտագործված: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Ар.Медтехника ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԷԱՃԱՊՁԲ-2026/16-11-ԵՊԲՀ ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | |
|---|---|---|---|
| | товарный знак | марка | технические характеристики |
| 14 | | | |